

ՎԱՆ - ՔԱՂԱՔԱՄԻՋԻ ԱՊՐԻԼԵԱՆ ԿՈՒԻՆԵՐԸ

Գրեց՝ ՀԱՅԿ ԿՈՍՏՅԱՆ

ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ
ԹՈՒՐԳ ԳԵՐԻՆԵՐ ԵՒ ԿՍՈՒՎԱՐԱԿԱՆ
ՁԻՆԱՊԱՀԵՍՏԻ ՀՐԿԻՉՈՒՄ

Թուրքական յարձակումները Ապրիլ 7-ին մինչև 9-ը թէև ուժգին եւ կատաղի էին, սակայն հիմնական բնոյթ չէին կրեր, եւ չկրցան շօշափելի առաւելութիւն ապահովել, հակառակ իրենց դերազանց թուին եւ ուժին:

Հիմնական եւ նպատակաբար ձեռնարկները թշնամին չկրցաւ դորձադրել, ինչ որ յետոյ կիրառեց Ապրիլ 10-էն սկսած մինչև իր փախուստի օրը: Ան կարծես առջի այդ օրերուն, դեռ անձանօթ մեր ինքնապաշտպանութեան գլխաւոր կէտերուն, այս ու այն թաղամասի վրայ ընկնելով հեշտութեամբ պլտի թափանցէր ներս: Այդ իսկ պատճառաւ էր, որ բերդէն ուժեղացած ուղղութիւնը աջ ու ձախ էր եւ չէր համապատասխաներ վարէն դորձուած յարձակումներուն: Միայն Ապրիլ 10-էն սկսեալ էր, որ նկատուեցան միահարուստ եւ կեղբոնացած յարձակումներ որոչ զիրքերու շուրջ, թէ՛ բերդէն եւ թէ՛ ներքեւէն: Այսպէս յարձակման ենթակայ մեր դիրքերը որոշելու համար՝ թշնամին անոնց մօտիկ կէտերու վրայ բարձր ձողով կարմիր դրօշակներ կը անկէր: Սա կը ցուցնէր, թէ ներքեւէն ատոնց շուրջ յարձակումներ կան, ուստի բերդէն թնդանօթային ոյժ պիտի տրուէր:

Մենք յաջողեցանք կուռի ընթացքին խել էրէք այդպիսի դրօշակներ, երբ թուրքերը՝ անգոր սեղի կուտային, եւ զինուորները յաղթանակ կը համարէին դուրս նետուելով դրօշակները խելու:

Ըստ այսմ մինչև Ապրիլ 10-ը մեր բոլոր դիրքերը բոլոր ճակատներու վրայ մնացին շատ անկարեւոր միասնելով, իսկ անկէ յետոյ փոխուեցան. այնպէս որ բերդի ուժեղացում եւ կրակը, ներքեւի թնդանօթակոծութիւն եւ յարձակումը միաժամանակ՝ որոշուած դիրքի շուրջ տեղի կ'ունենային:

Այսպէս, օրինակ, Ապրիլ 10-ին առաջին անգամ ըլլալով, նկատեցինք, որ բերդի կեղբոնի երկու եւ Հայկականքէն դորձող մէկ թնդանօթները միաժամանակ թէ՛ ճակատէն եւ թէ՛ կոնակէն սկսեցին դարնել Մարութեանի մեր դիրքը, որով յաջողեցան վերնայարկը ամբողջովին քանդել:

Յարձակման սոյն կերպը, թէև մէկ կողմէն զրկեց մեզ վերի դիրքերէն կուռելու առաւելութենէն, բայց հարկադրեց մեզ դիրքերը լքել: Դեռ կը մնային վարի յարկերը, որոնց՝ թնդանօթով վերէն դարնել դժուար էր, իսկ ներքեւէն անհնար: Ուստի ընդհանուր ուղղութեամբ թուրքերու նոր խելքին ընկած այդ մեթոտին՝ հակադրեցինք կուռ վարել ներքին յարկերէն, դետնի երեսէն մէկ կամ երկու արշին բարձր: Իսկ վերի յարկերու կիսատ սրատ նորոգումով եւ այն տեղերէն երբեմնակի մեր տուած պատասխաններով թշնամին մնաց մոչորուած՝ ուշադրութիւնը վրիպած:

Ապրիլ 7-ի դիշերային եօթամեայ յարձակողականը պակած էին մեր վարած ինքնապաշտպանողական ձեռնարկները: Ծուխ ու մուխը հրդեհումներու մարմնող լոյսերով բոներ էին քաղաքի շրջապատը: Ազօթարանը նոր ճիւղեր բացեր էր, երբ բերդի կեղբոնէն երկու եւ Սոսխոտի բարձունքէն մէկ թնդանօթի ազդանշանը տուաւ: Չորս կողմէն սաստկացած մոլեղնութեամբ կուռ սկսաւ: Մարութեանի, Տէր Պօղոսեանի, Շահէն աղի, Թէքալիֆի հարպիէյի, Միրզախանեանի, Խանի տակի եւ Իւնուզի դիրքերը ուժգին կը հակադարձէին թուրքական բոլոր սեղմումներուն, որոնք առաւելագոյն կը պտտէին յիշուած մեր դիրքերու շուրջը:

Նոյն օրը ցերեկուայ 3-ին միլիսներն եւ չէրքէզները, Գաթըրջի ջամիլի մէջ թնդանօթ գետեղելով, 30-40 մէթրի վրայ ուժեղացան Շահէն աղի տան այն ճակատը, որու ետեւէն մեր սղայք դիրք մասն կը կուռէին: Ասով